ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆԻ ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐՈՒՄ. «ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ*

Զինահիդա Բալայան

Բանալի բառեր՝ Կ. Կ. Մելիք-Շահնազարյան, Տմբլաչի Խաչան, «Զուռնա-Տմբլա», Շուշի, «Թոփխանա», Պետդումա, հոգևոր Սինոդ, արդարադատություն, Արցախ:

XIX դարի վերջին քառորդի Արցախի մշակութային կյանքի, գրական, բանագիտական, պատմագիտական, հասարակական մտքի վերհանման, քաղաքական միջավայրի կերպավորման գործում անուրանալի է Վարանդայի Մելիք Շահնազարյան Մելիք Հուսեինի (1736) տոհմի[1] շառավիղ, եռանդուն գրական, մշակութային գործիչ ***Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան- 1857-1940 թթ.)*** *վաստակը, ում ստեղծագործությունները (գեղարվեստական, թարգմանական, բանահավաքչական, մանկավարժական և գյուղատնտեսական ուղղվածությամբ)՝ հեղինակով հանդերձ, շատ մեծ հետաքրքրություն էին վայելում տարածաշրջանում հասարակության, մտավոր լայն շրջանակների և ընթերցողների կողմից:*

Կ. Կ. Մելիք-Շահնազարյանը ստեղծագործել է XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներին:

Կ. Կ. Մելիք-Շահնազարյանին գրական ճանաչում է բերում ***1900-1901 թթ.*** *Բաքվում հրատարակած երգիծական ֆելիետոնների* ***«Զուռնա-Տմբլա»*** *երեք գրքից բաղկացած ժողովածուն, որը լրացվում և վերահրատարակվում է* ***1907-1908 թթ. Վաղարշապատում (Էջմիածնում):***

Գրական հայերենի, գրաբարի, ռուսերենի, ֆրանսերենի հիանալի գիտակ Կ. Մելիք-Շահնազարյանն իր երկերի լեզուն դարձնում է Արցախի հարուստ բարբառը: Արցախահայության կյանքի վիպական հանրագիտակ դարձած «Զուռնա-Տմբլա» ժողովածուն նվիրելով իր շատ պատվական ազգին՝ տիտղոսաթերթին նշում է հետևյալը. «Իմ աչքի յույս ղարաբաղցոց, մեծին ու պուճուրին փեշքեշ»[2], ապա արցախահայ բարբառի՝ դժվարամարս բառ ու բանի հարուստ շերտերի օգտագործմամբ, իր անունից գեղարվեստական կերպավորում ստացած հերոսին՝ Տմբլաչի Խաչանին, ժամանակախոս դարձնելով, գրում հետևյալը. «էլ օզըմ չըմ ըրգընցնիմ, իմ աչքի լյուս ըշխարքավըս մին փռված նամուս ղեյրաթավ ղարաբաղցիք, իմ հույսը ծեզ երա ա, ծեր աբուռը օլմիա թա չոլը քցիք, դուդի բուդի պեներու հետա կենաք, ծեր վյաթանը մուռանաք, ծեր վառ ուջախին երա ճյուր ածիք, Ղարաբաղին անումը կոտրիք…» [3]:

«Զուռնա-Տմբլա» ժողովածուի մեջ զետեղված ֆելիետոններն ունեն սոցիալ-քաղաքական, ընտանեկան-կենցաղային և այլ ուղղվածության թեմա ու թեմատիկա:

«Զուռնա-Տմբլայում» Տմբլաչի Խաչանը (երկերի գլխավոր հերոսը) հանդես է գալիս որպես ֆելիետոնների հեղինակ՝ Կ. Մելիք-Շահնազարյանի փոխարեն ու խոսում է նրա անունից՝ որպես ժողովրդի ձայնը, ժողովրդի ներկայացուցիչը. դա երգիծաբանի գեղարվեստական հնարանքն է ու համակրանքը՝ հարստահարվածների հանդեպ, որը կարմիր թելի պես անցնում է Կ. Մելիք-Շահնազարյանի՝ Տմբլաչի Խաչանի բոլոր երկերով :

Կ. Մելիք-Շահնազարյանի՝ Տմբլաչի Խաչանի ֆելիետոններում պատկերված է նրա ապրած ժամանակաշրջանի արցախցիների բնականոն, սոցիալական, բարոյական, քաղաքական, իրավական, կենցաղային, տնտեսական կյանքի, տգետ և լուսավո-

---

* Հոդվածն ընդունվել է 16.03.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Խանյանը:

րական մարդկանց, գրական, մշակութային արժեքների գեղարվեստականացված, բանաբանված նկարագիրը, որի առանցքներում բացահայտվում են արցախցիների խառնվածքային գծերը, լուսավորվելու ներքին մղումն ու պահանջը, հետամնաց բարքերի պատկերը, որի մեջ արցախցու ընդվզող կամքն ու անկոտրում ոգու պարույրներն են տեսանելի դառնում՝ երգիծաբան-գրողի գրչի տակ:

Երգիծաբանի ֆելիետոններում, վիպական լայն գծերով գեղարվեստականացված-բանաբանված ենք տեսնում ոչ միայն Շուշիի բազմակողմանի նկարագիրը, այլև հատկապես առաջին անգամ խորը շերտերով բացահայտված, մեծ հռչակ վայելող, նշանավոր «Թոփխանա» հրապարակը, որը Տմբլաչի Խաչանի սուր գրչի տակ երանգավորված, փիլիսոփայական մեկնություններով բացահայտված համաժողովրդական հավաքատեղիի ամբողջական նկարագիրն է հատկանշում:

Լեոն իր 1889 թ. հունվարի 28-ի թվակիր նամակում Կ. Մելիք-Շահնազարյանին և՛ գովաբանում, և՛ դիտողություններ է անում՝ խորհուրդ տալով չօգտագործել ո՛չ գրաբարյան լեզվական ձևույթներ, ո՛չ ֆրանսերեն, ռուսերեն արտահայտություններ, այլ հավատարիմ մնալ միմիայն արցախյան բարբառին ու ճիշտ ու շիտակ դատող, անգրագետ ու միամիտ արցախցու՝ հանձին Տմբլաչի Խաչանի մտաշերտերի, որոնք չնայած միամիտ, անգրագետ, բայց ավելի ազդու և բնավորության գծերին ավելի հարազատ ու տիպական կլինեն. «Սպասի՛ր, էջմիածին ո՞ւր ես գնում. այնտեղ խարաբա է: Շուշուց շատ մի հեռանար: Քո աշխարհդ այս է, այստեղ միայն տմբլատ եղած կլինի:- Կռներտ ղվաթավ…. Թող, ի սեր Աստուծո, այդպիսի բաները: Գրիր իբրև Տմբլաչի Խաչան, իբրև անհասկացող, իբրև անզարգացած մարդ և տես այն ժամանակ, թե ձայնդ ուր կհասնե….Դու կարող ես էլի մասնավոր կերպով պոլիտիկան լինել, բայց պոլիտիկան իբրև Տմբլաչի Խաչան»[4]:

Ինչպես Սայաթ-Նովան իր քամանչան, Խաչանը ևս զուռնան և տմբլան բարձր արվեստական արժեքներ է համարում, անձնավորում, որոնք նույնիսկ ոչ մեկին վստահել չի կարող:

*Տմբլաչի Խաչանը շնչում է Շուշիով՝ Հայկական թաղամասի կենտրոնում գտնվող «Թոփխանայի» տեսլականով՝ իբրև հասարակական հնչեղություն ունեցող հարցադրումների քննարկման և որոշումների հստակեցման ու կայացման վայր՝ **«որպես շուշեցիների տնտեսական ու մտավոր կյանքի կենտրոն»**[5]՝ անփոխարինելի ու սիրելի բոլորի (ահել-ջահել, արհեստավորներ, մտավորականություն, երևելի անձինք) համար՝ վեճ ու զրույց բացելու տարաբնույթ հարցերի, մտահոգությունների շուրջ: Այդ ֆոնի վրա ձևավորված ենք տեսնում առևտրական-վաճառականական դասակարգը, որը, տեղում զարգանալու միտում, տարածք չունենալով, հոսում է դեպի չորս կողմ՝ Եվրոպա, Ռուսաստան, հետ վերադառնում, վաճառականության ոգի տարածում Արցախում:*

Արցախցու մտավոր ու առևտրական մտածելակերպի զարգացման, ստեղծաբանելու, ժողովրդական բառուբան հորինելու, տղամարդկանց ու կանանց զբաղվածության աստիճանը, «ղըլցե» կանանց աղջիկ ընտրելու կարգը որոշելու, առտնին հոգսերը քննելու-կարգավորելու գործում կարևորելով «Թոփխանայի» հանրային նշանակությունն ու դերը՝ Թ. Հայրապետյանը բնութագրում է այն որպես մի վայր, որտեղ «….Շուշիի իրական կյանքը ներկայանում է որպես բաց համակարգ, որտեղ կատարվում է եղելություն, լրատվության փոխանցում, որը ներգործելով ունկնդրի վրա՝ նպաստում է հույզերի և ապրումների արտահայտմանը: Ճիշտ է, Շուշիի կյանքը հրապարակային քննարկման է ենթարկվում «Թոփխանայի» շրջանակներում, սակայն չպետք է մոռանալ, որ այստեղ հարգվում է դիպուկ խոսքը, հումորը, երգիծանքը….Հենց «Թոփխանայից էլ ծայր է առնում մեկընդմիշտ հաստատագրված բնագրեր չճանաչող ժողովրդական բանահյուսությունը…. Ծանրութեթև է արվում հարսնացուի հարազատների հասարակության մեջ գրված դիրքը, ունեցվածքը, թեկնածուի արտաքինն ու օժիտը» [6]:

Կ. Մելիք-Շահնազարյանի՝ Տմբլաչի Խաչանի գեղարվեստական մտածողության

բարբառային հյուսվածքը, այս տեսանկյունից դառնում է տիպական.

«Հուռին- Թա ինձ կըհրցնիք՝ ես Ծկոռունց ախծկան ըմ հավան:

Զառին- Վո՜ւյ, ցավս քաղի նա, օսերը լիա մալականու օսեր ինի, իրիսկըհատը պընպենուտ, աչքերը լիա տրաքած շմբալութ, կիշըկրողը նրան տանի, նա հինչ զատ ա, վեր Պրտանին միար օգինք:

Վառին- Ախծի, ասըմ ըն քեթն էլ կուռնոս ա:

Հուռին- Բա՛, կըլխիս մատաղ ինի ըտրա ասողը, քեթը լիա հանց ա շիմշատ քթոլ»[7]:

Հետաքրքիր են տրված նաև մշակութային կյանքի նկարագիրը, թատերասեր հասարակության կերպարների բնութագրումները (Զավահիր, Մարյան բաջի, Հուռի) Տմբլաչի Խաչանի վիպական արարումներում, ինչպես, օրինակ՝ Շեքսպիրի «Օթելլոյի» բեմադրության ընթացքում ահաբեկված Մարյան բաջու հոգեկան վարքը, երբ թատրոնից լեղապատառ փախչում է, որպեսզի ոստիկանությունը իրեն չկանչի վկայություն տալու՝ բեմում կատարված սպանության կապակցությամբ, «Հայոց թիատրան» ֆելիետոնի հերոսուհու՝ Հուռու անգետ եզրահանգումը՝ դերասանուհի Սիրանույշին թատրոնի ավարտից հետո՝ հաջորդ օրը, կենդանի տեսնելու կապակցությամբ:

Տմբլաչին Խաչանի մականունն է նախևառաջ նրա զբաղմունքը՝ բանահյուսական էությունն ու խառնվածքը, երգիծելու անզուգական շնորհքը, արարելու ջիղը: Նրա հանդեպ անհուն սիրով են լցված շուշեցիներն անխտիր կերպով, արվեստի, գրչի մարդիկ, արցախցիները, կովկասյան հայաշատ վայրերը ու… անհամբեր են նրանք ընթերցելուվայելելու հեղինակի համով-հոտով գրվածքները, գաղափար կազմելու արցախցիների հալից, հերքումներից, մտորումներից, անխնա երգիծելու պահանջից, հոգու պայծառությունից, կյանքի բազմաբնույթ դրվագներից, անարդար կողմերի քննադատությունից, ըմբոստությունից: Հասարակության տարբեր խավեր (բոլոր դասակարգերից, ուսանողներից, գրական գործիչներից՝ Լեո, Մ. Բարխուդարյան, Մուրացան, Ա. Բակունց և այլն) նրան «ազնիվ բարեկամ» են անվանում, հորդորում-խնդրում՝ անխնա գրել ֆելիետոններ: Նա գուսան է, մունետիկ, տմբլաչի, զուռնաչի, ազդարար: Տմբլաչի Խաչանի երկերի պատկերավորման հիմնական միջոցները ժողովրդական նվագարանները, զուռնան ու տմբլան են՝ որպես միասնական հնարանք, ռազմակոչ ու հաղթանակ ազդարարող, եղելության, լուրերի տարածողներ, որոնք Արցախ աշխարհի քաղաքական, գրական, հասարակական կյանքի պարզաբանող-լրափողերն են, Խաչանի մտածելակերպի, հույզերի դրսևորման առարկայական միջոցները, և որոնք ազդարարում են արցախցիների հոգևոր և մտավոր աշխարհի ամուր ու թարմ, մարտական, ճշմարտախոս կենսազգացողությունը: Հիրավի, ճշմարիտ է Խաչանը՝ ժողովրդի անխարդախ ձայնը, երբ ավետում է՝ «Զուռնիս փըչըմ ըմ, Տմբլիս թըխմ սաղ ըշխարքին իմըցնըմ, վեր...»[8]:

Զուռնա-Տմբլան միասնական կերպար է, արցախցու հին պատկերացումների միասնության պարույրը, որին խորթ չէ ազդարարել արցախցու ցանկացած հոգեվիճակ՝ ուրախություն, տխրություն, զայրույթ, խոհ, ազատատենչ ոգի, Ղարաբաղի անօրեն խաների ծանր հարստահարումից, թշնամիների վայրագութ յուններից եկող քաղաքական ծանր կացություն, սուգ. այդ իսկ պատճառով Տմբլաչի Խաչանն անչափ անհանգիստ է. «Միեգ քեզ ըմ հրցնըմ, Խաչանը հի՞նչ վայ տա կլխին, հի՞նչ սրտավ Զուռնին փչի յա Տմբլին թխի, քանի վեր Հայու օջախը, են ղադիմի շղրթաթախ օջախը օրն օրին երա մուռտառվըմ ա, Ասծո օրհնությունը, խեր բարաբյաթը մեչան եր կենըմ, քանդվըմ, պրիշակ տեռնըմ, քշըրմոկնը ու բայղուշնեն մեչին պյուն տինըմ….»[9]:

Իր երգիծական երկերի ժանրը ընդգծելով, հաշվի առնելով նրանց թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները, նկարագրվող դեպքերի ու դեմքերի իրական գծերի պահպանումը իրականության արատավոր կամ հասարակական տեսանկյունից, վնասակար երևույթների քննադատությունը՝ Կ. Մելիք-Շահնազարյանը՝ Տմբլաչի Խաչանը, դրանք ֆելիետոն է անվանում և Ա գրքի «Երկու խոսք» բաժնում նշում հետևյալը. «Հրատարակության տալով Ղարաբաղի լեզվով մեր գրած ֆելիետոնները,

մենք նպատակ ենք ունեցել ի մի ժողովել այդ հատ ու կտոր հոդվածները, որոնք լույս են տեսել այս ու այն թերթում (գլխավորապես «Նոր դարում»), որպեսզի թեթևացրած լինենք Ղարաբաղի լեզվով հետաքրքրվող բանասերների գործը և միևնույն ժամանակ երևան հանած մեր ընտանեկան նիստ ու կացի, հասարակական գործերի և գործիչների աչքի ընկնող պակասությունները»[10]:

Կ. Մելիք-Շահնազարյանի կենսագրության գիտական շարադրմամբ, մտածելակերպի յուրահատկությունների բնութագրմամբ, արևելահայ գրականության (երգիծաբանության) ասպարեզում նրա տեղի ու դերի ճշտմամբ, գործունեության տարաբնույթ շրջանակների քննմամբ հանդես է եկել Թ. Հայրապետյանն իր «Կոստանդին Կարապետի Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). Կյանքն ու գործը» ուսումնասիրությանը:

Թ. Հայրապետյանը թռուցիկ ակնարկով ներկայացնում է ֆելիետոն ժանրի ստեղծման (1800թ., հունվարի 28, Փարիզ) պատմությունը, բնութագրում նրա դերը, նշում գրականության մեջ ունեցած դերակատարությունը, ընդգծում քննադատական-երգիծական բնույթը՝ այն համարելով ակնարկային գրականության տեսակ, գեղարվեստական-հրապարակախոսական ժանր, թվարկում նրա հատկանիշները՝ «նյութի այժմեականությունը, շարժունակությունը, առերևույթ անկանխատեսելիությունը, թեթևությունը, կոմպոզիցիայի ազատ կերպը, գեղարվեստական և ոչ-գեղարվեստական ժանրերի և ոճերի պարոդիական կիրառումը», նշում շոշափած խնդիրները՝ «կենցաղային արատներից մինչև միջազգային կյանքի հարցերը»[11]:

Բնութագրելով Կ. Մելիք-Շահնազարյանին իբրև գրական գործչի և գնահատելով նրա ստեղծագործական-գաղափարական միտվածությունը՝ Թ. Հայրապետյանը գրում է. «Տմբլաչի Խաչանը արդարության քարոզիչ է, նվագածու, ոտքի վրա սուր խոսք հորինող, հանգավոր ու անհանգ ասույթներ ստեղծող: Նրա բնատուր խառնվածքը երգիծանքն է, հորինած տողի համնուհոտը» [12]:

Փոքր ծավալի երկ լինելով՝ ֆելիետոնը, ըստ կառուցվածքի, պարզ ու դյուրըմբռնելի է, հաճախ՝ սյուժեի բացակայությամբ, բայց կերպարաստեղծ, ծավալվում է բնավորությունների զարգացմամբ:

Գրականագետները «էն դյունին ահվալաթան»՝ ֆելիետոնը, ժանրային առումով անվանում են ***երգիծական վեպիկ*** *կամ* ***ֆելիետոն վիպակ, որն ընդունելի տարբերակ է****:*

Տմբլաչի Խաչանի խարազանող ոճը հաճախ համեմատել են ռուս մեծ երգիծաբան Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործական ոճի հետ: Երգիծաբանի գրչընկեր Աշոտ Աթանասյանի (Սալ-Ման) քննմամբ՝ «Տմբլաչի Խաչանի ֆելիետոնները իրենց բովանդակությամբ և ձևով հիշեցնում էին ռուս մեծ երգիծաբան Սալտիկով-Շչեդրինի Губернские очерки պատմվածքները: Սուր դատողություն, կյանքի հումորով լի հեգնանք ու ծաղր բոլոր տեսակի և դիրքի հարուստների և մեծամեծների նկատմամբ»[13]:

«Զուռնա-Տմբլայի» Ա, Բ գրքերում զետեղված նյութերն ունեն թեմատիկ բազմազանություն՝ ընտանեկան-կենցաղային, սոցիալական, քաղաքական, որոնք կառուցված են վարպետորեն՝ հոգեբանական խիստ ներթափանցում, սատիրայի երանգներ, չափի համապատասխան ընդգրկում և այլն: Հեղինակի նպատակը ևս գեղագիտական և ուսուցողական է: Իր գրական գործունեության հանրային նշանակության մասին Կ. Մելիք-Շահնազարյանը նշում է հետևյալը. «Երանի կարողանայինք սորանով մի փոքրիկ ծառայություն անել մեր հայրենակիցներին, որոնց մտավոր ու բարոյական առաջադիմության ջերմ փափագողներից մինն է տողերիս հեղինակը»[14]:

Կ. Մելիք-Շահնազարյանի երգիծական էջերում վիպականացված են 1880-90-ական թթ. Արցախի հասարակական-քաղաքական կյանքը, հարաբերությունները, մշակութային, ազգագրական, պատմագրական կյանքի տարաբնույթ կողմերը, սուր քաղքենիական երանգները: Այս դիտանկյունից Կ. Մելիք-Շահնազարյանին կարելի է համարել ժամանակաշրջանի ամենանշանավոր երգիծաբանը արևելահայ գրականության մեջ:

Տմբլաչի Խաչանի երգիծանքը սուր է, գաղափարական լայն ընդգրկումներ ունի: Նրա ֆելիետոններում նկարագրված են կյանքի մութ ու ստվերոտ կողմերը, ծաղրված բարձր խավի փետրազարդ «դամաների պընըփեշակը», Շուշիի՝ դարավերջի գավառական քաղաքի եռուզեռը, բացահայտված արցախցի կանանց մոդայասեր տեսակը՝ հանրային կյանքում նրանց դերը ակտիվացնելու, հոգևոր և ոչ նյութական արժեքներին ավելի կարևորություն տալու համար հեղինակի գործադրած ջանքերը:

Հեղինակի հիանալի ֆելիետոններից է «Հայոց վեչերում»-ը, վալսի նկարագրությունը, որտեղ կերպավորված վերնախավի «մին քանե դոշն ու խիզատակնեն պեց հայասըզեր» իրենց վերջին մոդայի հետևորդներ են կարծում: Տմբլաչի Խաչանը, նկարագրելով Շուշվա Ղալեն կընանուց պընըփեշակը, Ղըլեն խերն ու շառը՝ ստեղծում է գավառական քաղաքի հիանալի վիպական նկարագիրը, շոշափում սոցիալ-կենցաղային, ընտանեկան հարցեր, Ղարաբաղի քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, հասարակ մարդկանց պաշտպան, մեկդարյա հեռավորությամբ, Մելիք Շահնազարի զվարճախոս Պըլը Պուղու (Խենթ Պողոս) նման Խաչանը ևս կրում է որոշակի սոցիալական գաղափարներ, նրա նման աղքատ գյուղացի է, ապրուստը մի խուրջինում տեղավորող, աղքատների պաշտպան, ծաղկում է սոցիալական անհավասարությունը, հասարակ մարդկանց արժանապատվության ոտնահարումը, ծաղրի ենթարկում բարձր խավի հղփացածներին, որոնք ամեն պահի արհամարհում են ստորիններին:

Այս տեսանկյունից արժեքավոր է Կ. Մելիք-Շահնազարյանի գրչընկեր Ա. Աթանասյանի գնահատանքի խոսքը՝ գրված մեծ երգիծաբանի մահվան (1940թ., հուլիսի 10) կապակցությամբ, ինչը հատկապես վկայում է գրողի մեծ վաստակի մասին. «Կ. Մելիք-Շահնազարյանը թողել է շատ հարուստ գրական արխիվ, ուր կան «տպագրության համար պատրաստ» բազմաթիվ աշխատությունների հետ նաև մեծ թվով գրական-մասնագիտական նյութեր, նամակներ, լուրջ ուսումնասիրություններ: Արժեր, որ առաջ դրանք ձեռք բերվեին և նրա միջից հանվեին ու լույս ընծայվեին արժեքավորները, որոնք Տմբլաչի Խաչանի ընտիր երգիծական պատմվածքների հետ կդառնային լայն մասսաների սեփականությունը»[15]:

Հեղինակի ունեցած կրոնաառասպելական պատկերացումները (Գաբրիել հրեշտակապետի հետ հանդիպումը. Խաչանի խնդրանք-աղաչանքը զանց առնելով՝ վերջինս, իր թևերին առնելով նրան, հասցնում է անտակ կամուրջի դեմ՝ ասելով. «Խաչան, դե հյունարըտ նշանց տո, անց կաց էն թարափը»[16]) այլաբանական են. երկու աշխարհների սահմանագիծը դժոխքի և դրախտի միջև է. սահմանը հատողը արդարամիտն է՝ դրախտի անձնագիր ստացողը: Իհարկե, արդարամիտ Խաչանն անցնում է կամուրջը և հիացմունքով խոսում դրախտի թոփխանայի մասին՝ այն դառնությամբ հակադրելով Շուշիի «Թոփխանային», իր ապրած միջավայրին, ուր միմիայն կեղծիք ու խարդախություն կան: Նախապատվելով դրախտի թոփխանան՝ Խաչանը «էն դյունին ահվալաթան» վիպակ-ֆելիետոնում «Ուհան պելուն» հոդած նամակում գրում է, որ դրախտում միայն լույս է՝ «հունց վեր մեր Բաքվա մըծըմեծանց սպալնոցը կանաչ-կարմուր լյուսը», «ըստեղ ատվակատ, սուդիա, պրիստավ, յասաղուլ, քյոխվա ու մողրով չի կա, վեր ըռըշվաթավ սոտը դյուզըցնին, սևը սիպտակցնին, հշտեղ չյաթուքյասաննե կան, թլակա ըզադին, էլհա մեյդան քցին» [17]:

Տիպական երանգներ են կրում Կ. Մելիք-Շահնազարյանի *երկերի արտահայտչամիջոցների առանձնահատկությունները՝ դիպուկությունը, ժողովրդական բառուբանի ճոխությունը, գաղափարական հագեցվածությունը, բարբառի հարստությունները, երգիծանքի անսպառությունը, այլաբանական ու բանաձևային բանահյուսության օգտագործման հնարանքները, ժանրատեսակների՝ առակ, ասացվածք, դարձված, հանելուկ, անեկդոտ, հարցուփորձ, առած, զրույց և այլնի առատությունը: Օրինակ՝ հետևյալ հարցուփորձը. «- Հի՞ բ պեդմա Թիֆլիզի Հայոց թիատրը մին կարգին ընգնի:*

- Հիբ վեր օղտին հյաքուն տափին նի կյա» [18]:

Զուռնան և տմբլան *խորհրդանիշներ են, որոնց օգնությամբ ամեն ինչից տեղյակ, անկաշառ երգիծաբանը քննադատության սուր սլաքի տակ է պահում հասարակական,*

գրական, քաղաքական, սոցիալ-կենցաղային, ազգային ճակատագրի հետ կապված բոլոր հրատապ հարցերը, անխնա մերկացնում ազգային և օտարերկրյա անբարո քաղաքագետներին, երկրներին, պատռում նրանց իսկական դիմակները, ֆելիետոն-վիպակում շոշափում աշխարհի քաղաքական անցուդարձներ, բացահայտում նրանց աչառու խաղերը, Հայոց հարցի միջազգային քննության հետ կապված միջազգային այլանդակությունները:

Այսպիսով՝ նման կարևոր հարցադրումներն, անշուշտ, ընդգծում են ***Կ. Մելիք-Շահնազարյանի*** *երկերի խիզախող ոգին, հեղինակի՝ իր ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր հարցերի առնչությամբ ունեցած ուշադիր և մտահոգ պահվածքը, որոնց մեկնությամբ բացահայտվում է ֆելիետոններում շոշափված հիմնախնդիրների քաղաքացիական և արդիական հնչողությունը, և որոնց դեպքում զուգահեռներ կարելի է անցկացնել հեղինակի ապրած բարդ ու հակասական ժամանակաշրջանի ու արդի ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին առնչվող շատ ու շատ հարցերի քննության միջև ու ստանալ պատասխաններ:*

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գործ 90 (ապագա գրական մշակի ինքնագիր տոհմագրությունը) :
2. Տմբլաչի Խաչան, Զուռնա -Տմբլա, գ. Ա, Վաղարշապատ, 1907 (այսուհետև՝ Զուռնա-Տմբլա, գ. Ա),
   Առաջաբան :
3. Տմբլաչի Խաչան, Զուռնա -Տմբլա, գ. Բ, Վաղարշապատ, 1908 (այսուհետև՝ Զուռնա-Տմբլա, գ. Բ), էջ 241 :
4. ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գ.119, թթ.1-2 :
5. Հայրապետյան Թ., Կոստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան) 1857-1940 Կյանքն ու գործը, տե՛ս Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, պր. 24, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007 (այսուհետև՝ Հայրապետյան Թ.), էջ 42 :
6. Նույն տեղում, էջ 43 :
7. Զուռնա-Տմբլա, գ. Ա, էջ 62 :
8. Զուռնա -Տմբլա, գ. Բ, էջ 94 :
9. Զուռնա -Տմբլա, գ. Բ, էջ 138 :
10. Զուռնա -Տմբլա, գ. Ա, Երկու խոսք :
11. Հայրապետյան Թ., էջ 51 :
12. Հայրապետյան Թ., էջ 70 :
13. «Աղբյուր» ամսագիր, Թիֆլիս, 1917, մայիս-հունիս, էջ 89 :
14. «Գրական թերթ» շաբաթաթերթ, Երևան,1940, թիվ 20 :
15. «Գրական թերթ» շաբաթաթերթ, Երևան,1940, թիվ 20 :
16. Զուռնա -Տմբլա, գ. Բ, էջ 2-3 :
17. Զուռնա -Տմբլա, գ. Բ, էջ 9 :
18. Զուռնա -Տմբլա, գ. Ա, էջ 204 :

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Արցախցիների կյանքի գեղարվեստական պատկերը
Տմբլաչի Խաչանի ֆելիետոններում. «Զուռնա-Տմբլա» ժողովածուները
Զինաիդա Բալայան

Գիտական ուսումնասիրությունը նվիրված է XIX դարավերջի և XX դարասկզբի արևելահայ երգիծաբանության թերևս ամենամեծ ներկայացուցչի՝ Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի **«Զուռնա-Տմբլա» (Ա և Բ հհ.)** ժողովածուների քննությանը, գրական, հասարակագիտական, քաղաքական, թարգմանական, հրատարակչական, մանկավարժական, ժողովրդագիտական, մի խոսքով՝ պատմամշակութաբանական գործունեության մեկնությանն ու գնահատմանը:

РЕЗЮМЕ
Художественный образ жизни арцахцев в фельетонах Тмблачи Хачана. Сборники “Зурна-Тмбла”
Зинаида Балаян

Ключевые слова: К. К. Мелик-Шахназарян, Тмблачи Хачан, “Зурна-Тмбла”, Шуши, “Топхана”, Государственная Дума, Духовный Синод, Правосудие, Арцах.

Научное исследование посвящено раскрытию и оценке литературной, общественно-политической, переводческой, издательской, педагогической, одним словом, историко-культурной деятельности возможно величайшего представителя восточно-армянского сатирического искусства конца XIX - начала XX веков К. Мелика-Шахназаряна, на примере сборника **“Зурна-Тмбла” (тт. А и Б).**

SUMMARY
The Artistic Image of Artsakhi People`s Life in the Feuilletons by Tmblachi Hachan. "Zurna-Tmbla" Collections
Zinaida Balayan

Keywords: K. K. Melik-Shakhnazaryan, Tmblachi Khachan, "Zurna-Tmbla", Shushi, “Topkhana”, State Duma, Spiritual Synod, Justice, Artsakh.

The scientific research is devoted to disclosure and assessment of literary, social and political, translation, publishing, pedagogical, in a word, historical and cultural activity of K. Melik-Shakhnazaryan, the greatest representative of the East Armenian satirical art of the end of XIX - the beginning of the XX centuries, on the basis of "Zurna-Tmbla collection" (vol. A, B).